ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ք. Երևան **«29» մարտի 2023թ.**

Հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 18-րդ և 19-րդ կետերը, և Խորհրդի նախագահի 2023 թվականի մարտի 24-ի N 3-Լ որոշումը՝ տեսչական մարմնի Խորհրդի արտահերթ նիստը որոշվեց անցկացնել հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա քվեարկությունը սկսվեց 2023 թվականի մարտի 29-ին՝ ժամը 9^{00}-ին և ավարտվեց՝ ժամը 16^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

Խորհրդի անդամներ՝

Ա. Դանիելյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ռ. Գևորգյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Մ. Թադևոսյան	- «Մասնակցային դպրոց» կրթական ծրագրի հիմնադրամի անդամ
Բ. Փափազյան	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ

Ա. Բախշյան - «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական

Ա. Հակոբյան - «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության կանոնադրության մեջ, ինչպես նաև վարչության պետի և գլխավոր մասնագետների պաշտոնների անձնագրերում (ծածկագրեր՝ 68-27.4-Ղ4-1, 68-27.4-Մ2-2 և 68-27.4-Մ2-3) լրացում կատարելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի «մասնագետի» (ծածկագիր՝ 68-27.5-Մ7-1) պաշտոնը «գլխավոր մասնագետի» (ծածկագիր՝ 68-27.5-Մ2-1) պաշտոնով փոխարինելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետի պաշտոնի անձնագրում (ծածկագիր՝ (68-27.6-Ղ3-1) լրացում կատարելու մասին:

Օրակարգային հարցի քվեարկությանն անհրաժեշտ նյութերն ուղարկվեցին Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացավ:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
2. Ա. Դանիելյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
3. Ռ. Գևորգյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
4. Լ. Բալյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
5. Վ. Սիրունյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
6. Մ. Թադևոսյան 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
7. Բ. Փափազյանը 11-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
8. Ա. Բախշյանը 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»,
9. Ա. Հակոբյան 1-ին, 2-րդ, 3-րդ հարցերին քվեարկեց «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝

Հարց 1-ին՝ 9 «կողմ»:

Հարց 2-րդ՝ 9 «կողմ»:

Հարց 3-րդ՝ 9 «կողմ»:

Այսպիսով, տեսչական մարմնի Խորհրդի հեռակա նիստին մասնակցած 9 անդամներից 9-ը օրակարգի հարցին քվեարկեցին «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության կանոնադրության մեջ, ինչպես նաև վարչության պետի և գլխավոր մասնագետների պաշտոնների անձնագրերում (ծածկագրեր՝ 68-27.4-Ղ4-1, 68-27.4-Մ2-2 և 68-27.4-Մ2-3) լրացում կատարելուն:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի հանրության հետ կապերի բաժնի «մասնագետի» (ծածկագիր՝ 68-27.5-Մ7-1) պաշտոնը «գլխավոր մասնագետի» (ծածկագիր՝ 68-27.5-Մ2-1) պաշտոնով փոխարինելուն:

3. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի պետի պաշտոնի անձնագրում (ծածկագիր՝ (68-27.6-Ղ3-1) լրացում կատարելուն:

Recoverable Signature

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն